Արձանագրություն N 3

**<< ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8>> ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի մարզադպրոցի ավարտման համար լրացուցիչ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

09.09.2016թ

ժամը 11:40

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Ջանջուղազյան |
| Հանձնաժողովի անդամներ ՝ | Ռ. Խոջայան/ գնահատող / |
| | Լ. Մելիքյան/գնահատող/ |
| Բացակայում էին՝ | Ֆ. Սարգսյան/ բացող / Գ. Գևորգյան/ բացող / |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Կիրակոսյան |

**I.Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 47-րդ կետի 1-ին ենթակետի՝ հարցում էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի <<ՇԻՆ-Տեխ>> ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

1.2 Հիմք ընդունելով 1.1 կետում նշվածը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- մերժել ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<ՇԻՆ-Տեխ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի, <<եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող>> ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2.<< ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հաշվի առնելով, որ <<ՇԻՆ-Տեխ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է, ծանուցել երկրորդ տեղ զբաղեցնող մասնակցին՝ <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական

փորձաքննություն>> ՓԲԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2.2 Հրավերով սահմանված ժամկետում 2.2 կետում նշված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում կմերժվի մասնակցի կողմից ներկայացված հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:*

### 3. Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի սեպտեմբերի 16-ին ժամը 10:10-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ 448 սենյակ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ------------------------------ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ ------------------------------ Ռ. Խոջայան

------------------------------ Լ. Մելիքյան

Քարտուղար ------------------------------ Ն. Կիրակոսյան